Ժողովրդական ընթերցանության համար։
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԵԴԷՐՍՕՆԻ № 1.

ՀԵՆՐԻԽ ՍԻՆԿԵՒԻՉ

ԵՐԱԺՇՏԱԿԷՐ ԷԱՆԿՕ

Թարգմանեց
ՏԻԿ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
Զրաբաստիպ Ա. Քուլաթելանցէի, Նիկ. 21.
1905

Ժողովրդական ընթերցանութեան համար։
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՆԴԷՐՍՕՆԻ № 1.

ՀԵՆՐԻԽ ՍԻՆԿԵՒԻՉ

ԵՐԱԺՇՏԱԿԻՐ ԷԱՆԿՕ

A 1/13429

Թարգմանեց
ՏԻԿ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ



ԹԻՖԼԻՉ
Աբաղատիպ Ա. Քուլթաթելաձէի, Նիկ. 21.
1905

Дозвол. цензурою Тифлисъ, 11 августа 1905 г.

Ծնուեցաւ մի երեխայ, նիհար էր նա և թոյլ։ Հարևանները հաւաքուելով ծննդկանի անկողնու շուրջը, ողջունում էին թէ մօրը և թէ երեխային։ Կուզնեչիխա Ձիմամով անունով մի կին, որը բոլորից փորձուած էր, իւր մխիթարական խօսքերով սկսեց հանդստացնել հիւանդին։

Տուր. ասաց նա.—ես կըվառեմ մեղրամոմը և կըխնդրեմ Ամենակարող Աստուածանից, որ տայ քեզ առողջութիւն, բայց սանամայր. քո առողջութեան մասին ոչինչ չի կարելի յուսալ. հարկաւոր կը լինի ուղևորել քեզ միւս աշխարհը, ուր կըգտնես քեզ համար յաւիտենական հանգիստ և անդորը կեանքը, իսկ այժմ պէտք է կանչել քահանային, որպէսզի նա քո մեղքերը քաւէ։

—Իսկ մանկանը, ասաց միւսը,—հարկաւոր է շուտով մկրտել, որովհետև նա մինչև քահանայի գալուստը կենդանի չի մնալ և լաւ չի լինի՝ որ մեռնի առանց մկրտելու, մինթէ մի քրիստոնէի մանուկը, այն աշխարհում չպէտք է արժանանայ տեսնելու Փրկչի ս. երեսը։ Այս ասելուց յետոյ, վառեց մեղրամոմը. յետոյ վերցրեց երեխային, ցանեց նորա վերայ ջուր, որից նա սկսեց աչքերը բաց ու խուփ անել ու վերջապէս ասաց.

—Մկրտում եմ քեզ անուն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն ու տալիս եմ քեզ Եանա անունը, իսկ այժմ դու քրիստոնէական հոգի, գնա այնտեղ, որտեղից որ եկել ես, այժմ կարող ես այն աշխարհում քրիստոնէից շարքը դասուել։

Բայց քրիստոնէական հոգին բոլորովին տրամադրութիւն չունէր գնալու այնտեղ, որտեղից որ եկել էր և թողնել իւր նիհար մարմինը, այլ ընդհակառակը, սկսեց շարժել այդ մարմինը ինչպէս որ կարողանում էր և լաց լինել, թէպէտ թոյլ և մի այնպիսի ողորմելի ձայնով, որ ինչպէս յետոյ սանամայրերը ասում էին. »Ցիշելն անգամ ծիծաղելի է, թէ կատուի ձագ է. կատուի ձագ չէ բայց լալիս է»։

Ուղարկեցին քահանայի ետևից։ Եկաւ նա և ինչ որ հարկաւոր էր կարգադրեց ու գնաց։ Հիւանդը փոքր ինչ առողջացաւ, այնպէս որ մի շաբաթից յետոյ դուրս գնաց իւր աշխատանքին, իսկ մանուկը դարձեալ լալիս էր. այդպիսով հասնում է տասը տարեկան հասակի։

Նիհար էր նա ու այբուած արեգակից. ուռած փողով և սեղմուած այտերով, մազերը խճճուած ու համարեա թէ ճերմակ հասնում էին մինչև պայծառ ու դուրս ընկած աչքերին, որոնք նայում էին աշխարհին այնպէս, ինչպէս մի անհուն տարածութեան վերայ։ Ձմեռը նա նստած էր վառարանի մօտ և մեղմ հեկեկում ցրտից, կարծես թէ քաշում էր օտարից, երբեմն էլ սովից, երբ մայրը փայտ չունէր վառարան վառելու ու մի ման կերակուր պատ-

բաստելու։ Ամառը շապկով էր մանգալիս, գոտին պարանի կտորից էր, իսկ գլխարկը ծղնոտեայ, որի պատառոտուած ափերից նայում էր աշխարհին, ինչպէս մի թռչուն երկնքին նայելիս։

Մայրը, իբրև մի աշխատասէր և օրէցօր ապրուստի միջոցը հայթայթող, ինչպէս ծիծեռնակը օտարի կտուրի տակ, գուցէ սիրում էր իւր երեխային մայրական ջերմ սիրով, բայց շարունակ ծեծում էր նորան ու անուանում. «ապօրինի ծնունդ»։

Ահա ութերորդ տարին է լրանում, ինչ Եանը ծոմապահութեան մէջն էր գտնւում. իսկ երբ խրճիթում ուտելու բան չէր գտնում, գնում էր անտառը սունկ հաւաքելու. որպէսզի գոնիա նրանով կարողանար լցնել իւր քաղցած փորը։ բայց ինչպէս եղաւ որ նրան այրտեղ գայլերը չկերան, այդ միմիայն Աստծուն է յայտնի։

Նա երկչոտ երեխայ էր. ընդհանրապէս. ինչպէս գիւղական բոլոր երեխաները ուրիշների հետ խօսելու ժամանակ մատները բերանն կոխում և ահա այնպիսի սովորութիւն ժառանգեց նաև Եանը։ Ոչ ոք չէր կարծում թէ նա կրմեծանայ, նա մանաւանդ, որ մայրը բոլորովին չէր կարծում՝ թէ նրանից մի որև է բան կարելի կը լինի սպասել։ Նա ընդունակ չէր աշխատանքի։

Յայտնի չէ, թէ ինչպէս պատահեց, որ նա կարողացաւ միմիայն մի գործի մէջ սէր ցոյց տալ, այն է երաժշտութեան մէջ։ Ամեն տեղ նա

լսում էր այդ և շատ սիրահար էր նուագածութեան, երբ փոքր ինչ մեծացաւ, ուրիշ ոչ մի բանի վրայ չէր մտածելու։ Որովհետև նա յափշտակուած էր երաժշտութեան ջերմ սիրուց։ Պատահած դէպքում. երբ նա գնում էր անտառը անասունների ետևից և կամ կողովով անտառային պտուղները հաւաքելու։ Վերադառնում էր դատարկ և ասում էր մօրը թլուատ լեզուով. — Մայրիկ, այնտեղ անտառում ինչ որ նուագում էին։ Ո՞հ։ Ի՞նչ հիանալի էր։ Իսկ մայրը նորան պատասխանում էր.—Ահա չարաճճի, ես քեզ նուագել ցոյց կըտամ, ես քեզ կըպատժեմ և այն ժամանակ դու կըճանաչես ինձ։—Մայրը երաժշտութիւնը ցոյց էր տալիս ծեծով։ Մանուկը ցաւից բացականչում էր. խօստանալով. որ այլ ևս չի անիլ, բայց իզուր, այդ երաժշտութիւնը մի այնպիսի խոր տպաւորութիւն էր թողել նորա վերայ. այնպէս՝ որ ոչ մի ծեծ և ոչ մի երկիւղ չէին կարող մոռացնել տալ նորան. չէին կարող մոռացնել տալ նորան, չէին անհետանում նորա մտքից. նա շարունակ մտածում էր. որ այնտեղ անտառում, ինչ մի բան որ նուագում էր։ Բայց ինչ, նա գիտէր այդ, գիտէր որ մորենիներ, եղևնիներ և ուրիշ շատ ծառեր էին նուագում, համարեա ամբողջ անտառը, և նոյն իսկ այդ ամենը—բնութիւնը։

Դաշտում, նորա դէմ, նուագում էր ժպտալով գարնան առաջին ձնծաղիկը. խրճիթի մօտի այգում ճռվողում էին ճնճղուկներ, կերասենիները դոզդողում էին և արձագանք տալիս։ Ահա

Եանկօն յափշտակուած կնութեան այսպիսի մի հրաշալի երաժշտութիւնից, երեկոները լսում էր ուշադրութեամբ այն բոլոր ձայները դայլալիկները, որոնք հասնում էին գիւղից և նա կարծում էր, թէ ամբողջ գիւղն է նւագում։ Երբոր նորան ուղարկում էին աշխատանքի—կենդանիների խուշկին խառնուելու. նոյն իսկ նորա ա կանջին խաղում էր քամու շվշվոցը։

Մի անգամ երբ նա կանգնած էր իւր գրզգզուակ մազերով և լսում թէ ինչպէս քամին շվշվում է փայտեայ եղան մատների միջով. նը կատեց Եանկոյին հսկողը և զօտին քանդելով մէջքից, սկսեց ծեծել... Բայց այդ բոլորը իզուր էր։ Մարդիկ անուանում էին նորան «Երաժշտասէր Եանկօ։ Գարնանը փախչում էր տանից, գետակի ափը, եղեգնեայ չլիներ շինելու։ Գիշերները, երբ գորտերը սկսում էին կռկռալ. թռչունները բուն շինել, և աքաղաղները ծուղրուղու կանչել, ցանկապատի վերայ, Եանկօն քնել չէր կարողանում այլ միշտ լսում էր և ինչպիսի ներդաշնակութիւն էր գտնում այս բոլորի մէջ. Աստուած գիտէ։ Մինչև անգամ մայրը իրա հետ եկեղեցի վերցնել չէր կարողանում, որովհետև երբ դաշնամուրը նւագում էր և տարածում խմբի քաղցր ձայնը, կարծես թէ երեխայի աչքերը ծածկւում էին մառախուղով և այդ աչքերը նայում էին դէպի մի ուրիշ վերացական աշխարհ... Պահապանը, որը ման էր գալիս գիւղի չորս կողմը հսկելու նպատակով, քունը չտանելու համար համարում էր երկնքի աստղերը, և

երբեմն էլ ցածր խօսում շների հետ. մի քանի անգամ տեսաւ Եանայի սպիտակ շապիկը որը մթութեան մէջ մօտենում էր խրճիթին, բայց նա գնում էր, ոչ թէ խրճիթը մտնելու, այլ թագնուելով այնտեղ պատի տակ և նայում էր, թէ ինչպէս մարդիկ լեհական պարեր էին պարում և երբեմն միորևէ պատանի, բացականչում էր «Ու-գա»։

Լսելի էր թէ կօշիկների տոփիւնը և թէ աղջկերանց ձայնը. բայց ինչ, ջուլթակը հանդարտ էր նւագում. «Կուտենք, կխմենք և կուրախանանք» իսկ կանտրաբասը մեղմ ձայնով կրկնում. «ինչպէս Աստուած տուեց, ինչպէս Աստուած տուեց»։ Պատուհանների առաջ դարսուած էին ճրագներ, այնպէս որ բոլոր սենեակները լուսաւորուած էին վառ լուսով և ամեն տեղ տիրապետում էր կենդանութիւն իսկ Եանկօն բոլոր ժամանակ լսում էր։ Նա կտար ամեն բան, ոչինչ չէր խնայի, եթէ միմեայն միջոց ունենար, այն ջուլթակը ձեռք բերելու համար, որ այնպէս հրաշալի նուագումը «Կուտենք, կըխմենք և կուրախանանք»։ Այդպիսի տախտակի կտորից շինուած մի բան որտեղից են ձեռք բերում, ով է շինում նորան. գոնիա՛, գէթ մի անգամ տային նորա ձեռքը այդպիսի մի բան, որով կարողանար իւր ծարաւը յագեցնել. բայց որտեղից, նորար կարելի էր միայն լսել, այո՛ լսել մեծ ծաւալով և յափշտակուած. մինչև այն ժամանակ, մինչև որ հսկողի ձայնը չտարածուեց. «էյ դու սատանայ, տուն գնալու ժամանակ չէ։

Իսկոյն վազեց նա այնտեղից իւր բոբիկ ոտներով և ջութակի քաղցր ձայնը ճանապարհին հասնում էր նորան, որը նւագում էր «Կուտենք, կըխմենք և կուրախանանք և կոնտրաբասի փառաւոր ձայնը—ինչպէս Աստուած տուեց»։

Նորա համար մեծ տօն էր այն ժամանակ, երբ կարողանում էր ջութակի ձայնը լսել, թող նա լինէր հարսաքնիքում կամ խնճոյքում։ Նա վեր սողաց վառառանի վերայ և լուռ նայում էր իւր փայլող աչքերով մթութեան մէջ, ինչպէս մի գող կատու։ Եանկօն, ծառի կեղևից և ձիան մազերից շինեց իրա համար մի ջութակ, բայց կարծես թէ նա չէր ցանկանում նւագել այնպէս լաւ և քաղցր ինչպէս երաժշտական ջութակը և նա արձագանք էր տալիս այնպէս մեղմ և թոյլ, որ նորա ձայնը նմանւում էր ճանճի բզոցին։ Եանկօն նորա վերայ նւագում էր առաւօտուանից սկսած մինչև երեկոյ, թէպէտ նորա համար այնքան ծեծւում էր, որ վերջի վերջոյ դառնանք կարծես մի թոշմած խնձոր։ Բայց նա դարձեալ չէր յուսահատւում նա, որովհետև նորա ընութիւնը, կամքը ամուր էր և նորա սէրը դէպի երաժշտութիւնը։

Երեխան, հետզհետէ աւելի և աւելի լղարում էր իրան տանջող վառ սիրուց, մազերը խտանում, աչքերը աւելի լայն էին բացւում և շարունակ լցւում դառն արտասուքներով. այտերը և կուրծքը աւելի խառն էին թափւում. այնպէս որ նա միւս երեխաներին չէր նմանւում. և աւելի նմանւում էր իւր կեղևից շինած ջու-

թակին, որը հազիւ հազ զնգզնգում էր։ Մինչև նոր հացի ձեռք բերելը, նա համարեա թէ մեռնում էր սովից և սնւում էր թաց գաղարով և ջուրթակ ձեռք բերելու փափագով։ Այս փափագը նրա համար բարի յետևանք չունեցաւ։ Հարուստ աղայի ծառան մի ջուրթակ ունէր, և երբեմն երեկոյեան պահերին նւագում էր, որպէսզի դուրգար իւր հարուստ աղայի նաժիշտին։ Եանկօն երբեմն սողում էր առաջ տան դռան արանքից։ որպէսզի տեսնէր և լսէր ջուրթակի ձայնը։ Նա կախուած էր պատից, դռան դիմաց, իսկ երեխան ագահութեամբ նայում էր այնպէս, կարծես իրա համար մի անհասանելի սրբութեանը, որին նոյն իսկ մեղք էր համարում շօշափել, բայց և այնպէս նա սարսափելի ցանկանում էր այդ, Գոնիա գէթ մի անգամ վերցնել ձեռքը և մի լաւ նայել նրան։ Այս միտքը տանջում էր նորան և հանգստութիւն չէր տալիս և փոքր թշուառ սիրտը դողդողում էր ուրախութիւնից, կարծելով թէ կարող է այդ ձեռք բերել։ Մի անգամ սեղանատունը դատարկ էր, տանտէրերը վաղուց արտասահմանումն էին ապրում, ծառան նստած էր, տան միւս կողմը, աղայի նաժիշտի մօտ. իսկ Եանկօն թագնուելով, դռան ճեղքից վաղուց նայում էր իւր ցանկացած նպատակին։ այն է ջուրթակին։ Լուսինը իւր լուսաւոր ճառագայթները արձակելով սեղանատան պատուհանների վերայ, լուսաւորում էին նրանց քառակուսի ձեւով մի լոյս արձակելով հակառակ պատի վերայ, այդ լոյսը կամաց կամաց մօտենում էր դէպի

ջուլթակը, որին ձեռք բերելու համար Եանան երկար ժամանակ սպասում էր սրտատրոփ և տխուր, և վերջապէս լուսաւորեց, նամանաւանդ լուսաւորուած էր ջուլթակի դուրս ընկած տեղերը և այնպէս փայլուն էին որ Եանկօն նայել անգամ չէր կարողանում...

Ախ, այս տեսարանը շատ հիանալի էր։ համարեա թէ երևակայական։ Եանկօն մեծ առագուլթեամբ էր նայում, դռան ետևը թագնուած և ընկած իւր նիհար ծնկների վերայ, բաց բերանով նա անդադար նայում էր ու նայում... Երբեմն երկիւղն էր կանգնեցնում իւր տեղը և երբեմն էլ մի անյաղթելի ոյժ դէպի առաջ էր մղումնորան.—Ի՞նչ կախարդուլթիւն է այս. մտածում էր նա... կարծում էր որ միմիայն լուսաւորուած ջուլթակը մօտենում. սաւառնում էր դէպի իրան... երբեմն նա մռայլում էր, որպէսզի նորից աւելի զօրեղ լուսաւորուի։

«Կախարդուլթիւն է այս, այո՛ կախարդուլթիւն»։ Այդ ժամանակ քամին փչեց, հանդարտ կերպով ծառերն սկսեցին իրենց շվշվոցը, տերևները շարժուել և Եանկօն պարզ լսում էր.

— Արի Եանկօ, սեղանատանը ոչ ոք չկայ, արի Եանկօ մի վախենար...

Գիշերը լուսաւոր էր, այգում, լճակի վերայ երգեց սոխակը, թէ ցածր և թէ բարձր.—արի. գնա. վերցրու»։ Ցարգելի բուն կամաց թռաւ երեխայի գլխի վերայով և բացականչեց. «Ո՛չ. Եանկօ, մի գնա, մի վերցրու։ Բայց բուն թռաւ. իսկ սոխակը մնաց և տերևները պարզ շշնջում

էին. «այնտեղ ոչ ոք չկայ»։ Ջուլթակը նորից լուսաւորեց աւելի պայծառ։

Խեղճ փոքր արարածը դանդաղ և զգոյշ կերպով առաջ խաղաց, իսկ սոխակը մեղմ շը-ւում էր «աբի վերցրու, և տար»։

Սպիտակ շապիկը մօտենում էր սեղանատան դռանը, այժմ սև տերևներ չէին ծածկում նորան, տան շէմքի վերայ լսւում էին հիւանդ երեխայի դառն հառաչանքները. էլի մի բոպէ. և թշուառ սպիտակ շապիկը անյայտացաւ և միմիայն բոբիկ ոտները մնում են շէմքի ետև։ Ի-զուր բուիկ, դու դարձեալ թռչում ես. և խռպոտ ձայնով բացականչում. «չէ, մի վերցրու»։ Եանկօն արդէն սեղանատանն էր։ Նոյն բոպէին ճահճի բազմաթիւ գորտեր սկսեցին կռկռալ և յետոյ հանգստացան, լռեցին. սոխակը հանդարտուեց. տերևները նոյնպէս և ահա այժմ մեռելային լռութիւն էր տիրում. այն ժամանակ Եանկօն կամաց կամաց առաջ սողաց, բայց երկիւղը թագաւորում էր նորան, տերևների տակ զգում էր, որ կարծես թէ իւր տանն էր. իսկ այժմ նա իրան զգում էր, ինչպէս վայրենի գազանը թակարդի մէջ։ Նորա շարժումը արագացաւ, և կուրծքը սկսեց արագ. արագ բարախել և հառաչանքներ արձակել և Եանկօյին խաւարը պատեց։ Ամառային մեղմ արշալոյսը, թռչկոտելով երկնքում. մի անգամ էլ լուսաւորեց սեղանատան ներսը և Եանկեն ծնկաչոք, սողալով մօտեցաւ ջուլթակին և գլուխը վեր բարձրացնելով ափշած դիտում էր. բայց ճառագայթը հան-

գաւ և թագկացաւ ամպերի տակ և այնուհետև այնտեղ ոչինչ չէր կարելի տեսնել և լսել։ Սեղանատանը մեռելային լռութիւն էր տիրում և լռութեան մէջ Եանկօին աշխատում էր հասնել իւր նպատակին, այն է ձեռք բերել ջուրթակը և աղատուել այն բոլոր տանջանքներից, որոնք այդ ըոպէին շրջապատել էին թշուառ երեխային. նորա սիրտը չէր հանգստանում այլ արագ և արագ բաբախելով հալ ու մաշ էր անում նորան, դժուար իր նորա դրութիւնը, նա ուզում էր վայր բերել ջուրթակը և յանկած այդ մեռելային լռութիւն տիրող սեղանատանը տարածուեց. մի մեղմ և առատ ձայնը. կարծես թէ մէկը անզգոյշ կերպով դիպաւ ջուրթակին և յանկարծ... մի ինչոր կոպիտ, քնաթաթախ ձայնը, որը դուրս էր գալիս անկիւնից բարկութեամբ հարցրեց. «Ո՞վ կայ այնտեղ»։

Եանկօն երկիւղից շնչառութիւնը ընդհատեց. բայց կոպիտ ձայնը նորից հարցրեց—«Ո՞վ կայ այնտեղ»։ Ով որ վառեց լուծկին լուսաւորուեց սեղանատունը, իսկ յետոյ... Ո՜հ Տէր Աստուած, ինչեր կատարուեց Եանկօյի վերայ, և ինչ էր նորա դրութիւնը։ Լսւում էին հայհոյանքներ, կռիւ, երեխայական լացը, աղմուկը. սոնձ ասում էր. «Ո՜հ, ի սէր Աստուծոյ»,

Միւս օրը խեղճ Եանկօն կանգնած էր դատաւորի առաջ և պէտք է դատէին նորան ինչպէս գողի, ինչպէս յանցաւորի, ի հարկէ։ Նայեցին դատաւորները ինչպէս նա կանգնած էր նրանց առաջ, բեռանին դրած մատով, դուրս

թափուած վախեցած աչքերով. փոքը, նիհար, ջարդուած, չճանաչող, թէ ո՞ւրտեղ է նա և ի՞նչ են ուզում նորանից... ի՞նչպէս կը դատես նորան, նա մանաւանդ, որ նա դեռ տասը տարեկան է և հազիւ հազ կարողանում է ոտի վերայ կանգնել, փակել բանտում. կամ ուրիշ ի՞նչ անել... Յամենայն դէպս, փոքը ի շատէ բարեգութ պէտք է լինել։ Թող նորան վերցնի պահապանը և պատժէ, որպէսզի միւս անգամ չհամարձակուի նա փորձել գողութիւն և գործը վերջացած է։ Ահա խեղճ Եանկոյի դատավճիռը։

Կանչեցին պահապանի կնոջը.—վերցրու նորան և լաւ ծեծիր, այնպէս որ նա յիշէ։ Կինը գլուխ տուեց իւր գազանական գլխով, վերցրեց Եանկոյին ձեռքը բռնած իբրև մի կատուի ձագ և դուրս բերեց ներքնայարկը։ Երեխան կամ չէր հասկանում թէ ինչ էր կատարւում իւր շուրջը կամ թէ վախեցած էր և ոչ մի ձայն չէր հանում, միմիայն նայում էր այնպէս, ինչպէս թակարդի մէջ բռնուած թռչուն։ Մի՞թէ նա գիտէր թէ ինչ պէտք է անէին նորան։ Ներքնայարկը տանելուց յետոյ, պառկացրեց գետնի վերայ, շուռ տուեց շապիկը և սկսեց ծեծել, և ահա Եանկօն այժմ միայն հասկացաւ իւր պատիժը և բացականչեց. «Մայրիկ» Եւ երբ անգութ կինը ծեծում էր նորան մտրակով, այն ժամանակ նա ասում էր. «Մայրիկ, մայրիկ». և նա այդ խօսքերը արտասանում էր ցածը և ցածը. թոյլ և թոյլ, վերջապէս այնքան գազանական ծեծից յետոյ երե-

խան լռեց և այլևս «մայրիկ» չէր բացականչում...
Խեղճ ջարդուած ջուլթակ...

Ա՜խ, դու կոպիտ և աննուլթ կին, ովքեր են այդպէս ծեծում երեխաներին? առանց այն էլ նա փոքր էր, այնպէս թոյլ, նիհար և միշտ հաղիւ շնչում...

Եկաւ մայրը երեխային տանելու և այնպէս թուլացած էր նա, որ ստիպուած էր ձեռքերի վրայ, գրկած տանել նորան... Միւս օրը նանկօն չվերկացաւ իսկ երրորդ օրը մեռաւ նա թաղիկ վերմակի տակ։

Ծիծեռնակները ճռվողում էին կեռասիններ-ի վերայ, որոնք կանգնած էին խրճիթի մօտ, արեգակնային ճառագայթը ներս ընկաւ պատուհանից և իւր ոսկեզօծ լոյսով լուսաւորեց խճբճուած երեխայի գլուխը և եթեսը։ Այս ճառագայթը թանգագին էր, որի ճանապարհով պէտք է գնար փոքր երեխայական հոգին դէպի առ Աստուած։

Մահուան ժամանակ երևեցաւ այդպիսի, արեգակնային, լուսաւոր լայն ճանապարհը, որը կարծես թէ խօստանում էր այն աշխարհում ուրախ և հանդարտ կեանք. իսկ այս աշխարհում կեանքը կարճ էր, անցուկ և փշալից, սակայն նորա սիրտը բաբախեց վերջին շնչով, իսկ դէմքը պարզ, կարծես թէ յառած լսում էր բաց պատուհանից լսում էր ծառերի տերևների շըշշիւնը։ Երեկոյ էր, աղջիկները վերադառնալով խոտաքաղից երգում էին. «Ոհ կանաչազարդ, ոհ մարգագէտին»։ Գետակի կողմից տարածւում

A 1/13429

էին փողերի ձայնները։ Եանկօն վերջին անգամ ականջ էր դնում, թէ ինչպէս գիւղը ցնծում էր Նորա դիմաց, վերմակի վերայ դրուած էր կեղևեայ ջուրթակը։ Ցանկարծ մեռնող երեխայի երեսը պարզուեց և գողդողուն շրթունքները շշնջացին.—Մայրիկ...

Ի՞նչ է որդեակ, պատասխանեց մայրը, որին արտասունքը այնպէս խեղտում էին։

Մայրիկ։ Երկնքումը Աստուած ինձ իսկական ջուրթակը կտայ։

—Կտայ որդեակ, կտայ, պատասխանեց մայրը, կորանից աւելի նա ոչինչ չէր կարողանում ասել, մինչև այժմ Նորա ամուր սիրտը թուլացաւ աւելացող վշտերից, նա կարող էր միմիայն հեկեկալ, «Ո՜հ Յիսուս, Յիսուս», Երեսով վայր ընկաւ արկղի վրայ և սկսեց հեկեկալ ինչպէս մի խելագար, նա աշխատում էր աղատել իւր թանկագին էակին անգութ մահուան ճանկերից, բայց չկարողացաւ. բարձրացնելով գլուխը, նա տխուր նորից նայեց Եանկօյի վերայ։ Փոքր երաժշտի աչքերը բաց էին և անշարժ. երեսը լուրջ էր, մռայլ և տխուր։ Լուսաւորը ճառադայթը անյայտացաւ։ Հանգիստ ոսկեբացդ, Եանկօ,

Միւս օրը, աղաները եկան Իտալիայից, եկաւ և տանտիկինը։ «Ի՞նչ հիանալի տեղ է Իտալիան։—Եւ ինչ երաժշտասէր ժողովուրդ, ինչ բաղդաւորութիւն կլինէր որոնել այնտեղ տաղանդներ և օգնել նրանց... աւելացրեց աղան։ Իսկ Եանկօյի գերեզմանի վերայ շշնջում էին տերևները։

[illegible]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0052655

504.7
504
A I 13429

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.